№ 60 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 24 **1897** ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 24 № 60

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
կէս աքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վնասակար ծրագիր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Գաղթականների օգտին. Նամակ Բագուից. Նամակ Երևանից. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Բաթումից. Նամակ Սիմֆերօպոլից. Նամակ Խմբագրութեան. ՆԵՐՔԻՆ լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Կրետէի գործերը. Յունաստան և Թիւրքիա.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատրիարքարանի շուրջը.

ՎՆԱՍԱԿԱՐ ԾՐԱԳԻՐ

—

«Մշակի» անցեալ համարում դանիական նպաստամատոյց յանձնաժողովի ծրագրի մասին հաղորդած տեղեկութիւնը մեծ զարմանք և մի և նոյն ժամանակ մեծ ցաւ պէտք է պատճառի բոլոր հայերին: Եւրոպական ամենաքաղաքակիրթ և լուսաւոր ժողովուրդներից մէկն եկել է այն ցաւալի եզրակացութեան, թէ քրիստոնեայ հայ ժողովրդի մնացորդները վերջնական ջնջումից փրկելու միակ միջոցը նրանց գաղթեցնելն է իրանց հայրենի երկրից, ուր նրանք հարիւրաւոր դարերից ի վեր ապրում են, սերունդից սերունդ:

Մենք արդէն հայոց հասարակութեան խորին երախտագիտական զգացմունքների թարգման հանդիսացանք, շնորհակալութիւն յայտնելով դանիական ազգին և նորին մեծութիւն թագուհուն, որը, համաբերա առաջինը, իր բարձր հովանաւորութեան տակ առաւ մի զուտ մարդասիրական գործ և համակրութիւն յայտնեց թիւրքաց բարբարոսութիւնից դժբախտացած նահատակ ազգին: Եւ ոչ մի կասկած չունենք, որ մշակելով հայերին թիւրքիայից գաղթեցնելու ծրագիրը, դանիական պալատը և ժողովուրդը ղեկավարվում են դարձեալ մարդասիրական վեհ զգացմունքներով:

Դանիական արքունիքը, և դանիական բարձր դասակարգի հասարակութիւնը դառն փորձի, ինչպէս և եւրոպական կոնցէրտի բռնած ուղղութեան հիման վրա, կարող էին գալ այն եզրակացութեան, որ հայոց հարցը դեռ շատ հեռու է լուծվելուց և մինչև նրա լուծումը, թիւրքաց բարբարոս կառավարութեանը կաջողվի իրագործել քրիստոնեայ հայ տարրը բնաջինջ անելու իր ծրագիրը, մի ծրագիր, որը նա ամբողջ 20 տարի ամենամեծ յամառութեամբ և տոկունութեամբ առաջ է տանում, առանց որ և է արդելքի: Եւ լաւ իմանալով, որ այսուհետև էլ ոչ ոք խոչնդոտ չը պէտք է հանդիսանայ թիւրքիային առաջ տանել իր մարդասպան ծրագիրը, քրիստոնեայ դանիական ազգը, իր յոյսը կտրելով եւրոպական դիպլոմատիայից, միակ մի միջոց է գտնում փրկելու դժբախտ հայերին վերջնական կորստից, և մարդասիրական ու քրիստոնէական պարտք է համարում դուրս հանել նրանց մի երկրից, որը թէև նրանց մայրենի հողն է, բայց այժմ նրանց համար գերեզման է դարձել:

Սակայն, որքան էլ վեհ լինի և մարդասիրական շարժառիթներից զրդված այդպիսի մի միտք, այնու ամենայնիւ մենք չենք կարող նրան համակրել, մենք չենք կարող չը յայտնել, որ այդ ծրագիրը միանգամայն կորստաբեր և վտանգաւոր է: Գաղթեցնել մի ամբողջ ազգ հայրենի երկրից, ուր այդ ժողովուրդը ապրել է դարերով, որի հետ կապված է պատմական քաղաքակրթական ամենանուիրական յիշողութիւններով, ամբողջ անցեալով, ներկայով և ապագայով,—այդ մի այնպիսի միտք է, որը իրագործելուց առաջ, պէտք է շատ լուրջ կերպով մտածել, կշռել բոլոր հետևանքները և աջողութեան հնարաւորութիւնը:

Որքան էլ դժոխային, անտանելի լինի հայ ժողովրդի վիճակը փոքր-Ասիայում, բայց դեռ չը պէտք է մտնվել վերջնական յուսահատութեան, չը պէտք է կորցնել փրկութեան յոյսը: Քրիստոնեայ Եւրոպան, որքան էլ անկարեկից, անտարբեր հանդիսացաւ դէպի այն ահեղ պատերազմը, որ կիսալուսինը յայտնել է խաչին, դէպի փոքր-Ասիայի քրիստոնեայ ազգաբնակութեան ահռելի տանջանքները, բայց նա դեռ չէ արտասանել իր վերջին վճիռը: Միայն իր հողի վրա ամուր մնալով, իր կուլտուրական և խաղաղ միսսիան յամառութեամբ առաջ քշելով, Թիւրքիայի հայ ժողովուրդը կարող է որ և է յոյս ունենալ, թէ վերջ ի վերջոյ ձեռք կը բերի իր մարդկային իրաւունքները և նրա անտանելի տանջանքները կը դադարեն: Եւ վերջապէս ո՞ր գաղթեցնել, որտեղ պատսպարել միլիոնաւոր մարդկանց: Անտուն, անհող թափառելը օտար երկիրներում կարող է նոյնպէս բնաջինջ լինելու հետևանքն ունենալ:

Նոյն իսկ, հանրամարդկային տեսակէտից, վնասակար է հայերին գաղթեցնելու ծրագիրը: Եթէ փոքր-Ասիան մինչև այժմ չէ վայրենացել, դա՝ շնորհիւ հայերի կուլտուրական հակումների և յատկութիւնների: Երբ հայ տարրը չքանայ այդ երկրից, շատ շուտով նա կընկնի վայրենութեան մէջ և քաղաքակրթութեան վերջին նշոյլները կը չքանան մի երկրից, որ մի ժամանակ ընդհանուր լուսաւորութեան օջախ էր, որի մէջ դեռ կանգուն են մինչև այսօր հիանալի կուլտուրայի բազմաթիւ կոթողներ:

Կրկնում ենք, գովելով հանդերձ այն մարդասիրական շարժառիթները, որոնցով ղեկավարվում է դանիական յանձնաժողովը, մենք միանգամայն վճռական ենք գտնում՝ հայերին փոքր-Ասիայից գաղթեցնելու ծրագիրը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Русское Экономическое Обозрѣніе» № 1, 1897
Պետերբուրգ.

Մեզ ուղարկված է «Русское Экономическое Обозрѣніе» ամսագրի առաջին համարը, որ լոյս է տեսել ներկայ մայիսին: Ամսագրի նպատակն է ծանօթացնել հասարակութիւնը այն տնտեսական խնդիրների հետ, որոնք վերաբերում են Ռուսաստանի ներկայ կեանքին և հետաքրքրում են եւրոպական հասարակագէտներին: Ամսագրի մէջ իբրև մշտական բաժիններ զետեղված են ներքին և արտաքին տեսութիւններ, որոնց մէջ չօչափված են ընթացիկ խոշոր հասարակական և տնտեսական երևոյթներ: Այդ բաժինները, ինչպէս և նոր գրքերին նուիրված բաժինը կը կազմեն ամսագրի ամենահետաքրքրական և դիւրըմբռնելի մասը: Բացի տեսութիւններից պէտք է տպագրվեն տնտեսագիտական խոշոր յօդուածներ և հետազօտութիւններ: Ամսագրի այդ բաժնի յօդուածները կարող են կարդացվել միայն մի դէպքում, եթէ նրանք ունեն մեծ ժամանակակից և ընթացիկ հարցի նշանակութիւն: Այլապէս նրանք մի ծանր բեռն կը կազմեն ամսագրի համար: Առաջին համարի մէջ տեղ են գտել յօդուածներ՝ ակցիզներական նոր բէֆորմի մասին, մաքսային սակագների հրատարակելու, միջազգային դաշնակցութեան և Աստրիայի դրամական բէֆորմի մասին: Ամսագրի գինը մինչև առաջիկայ յունվարի 1-ը նշանակված է 7 ռուբլի:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Յօգուտ թիւրքահայ գաղթականների, մինչև մայիսի 1-ը, ստացանք, կովկասեան կառավարութիւնից հետևեալ նվէրները.

1) Բագուից, պ. Նաբաթեանի միջոցով, 200 ռուբլի: Նուիրատուներն են՝ Ե. Եղիազարեանց 100 ռուբլի, և Բ. Մայիլեանց 100 ռուբլի:

2) Մերվից, Թ. Տէր-Պետրոսեանի միջոցով, 20 ռուբլի: Նուիրատուներն են՝

Յ. Աւետիսեանց 3 ռ., Ի. Թարխանեանց 3 ռ., Մ. Ղուկասեանց 3 ռ., Մագազին «Արարատ» 5 ռ., Տէր-Ստեփանեանց 3 ռ., Մ. Մկրտումեանց 2 ռ.:

3) Ղարասուբազարից, ուսուցիչ Կ. Ղլպուղեանի միջոցով՝ 39 ռուբլի, հետևեալ նամակով.

«Մարտի 30-ին պ. Կարամուրզայի՝ երկու սեռից կազմած հայկական խումբը, քաղաքային կլուբի դահլիճում, տուաց երկրորդ համերգը, որի արդիւնքի կէսը յատկացվեց յօգուտ հայ գաղթականների: Ընդհանուր մուտք եղաւ 132 ռ. 20 կ., ծախս 53 ռ. 95 կ. զուտ արդիւնք մնաց 78 ռ., որից 39 ռ. ուղարկելով յարգոյ խմբագրութեան, խնդրում ենք գործադրել հայ գաղթականների օգտին:»

4) Կուսապատ գիւղից (Զիվանչիրի գաւառ), ուսուցիչ Գրիգոր Խաչատուրեանցի միջոցով, 45 ռուբլի, որ նա հաւաքել է պարոններ՝ Շ. Մելքոնեանի, Ի. Ամիրէգեանի, Պ. Տէր-Եսայեանի և Յ. Սանտրեանցի օգնութեամբ: Նուիրատուներն են՝

Վերին-Կուսապատից 25 ռ. 15 կ., Դամիրլու գիւղաքաղաքից 2 ռ. 5 կ., Ուրմիայից 3 ռ. 40 կ., Մարդաղերտից 16 ռ. 5 կ., ընդամենը 46 կ. 65 կ. որից դուրս գալով պօստի ծախսը և ձիու վարձ՝ 1 ռ. 75 կ. մնում է 45 ռ.:

5) Թիֆլիսից, Գալուստ Մահտեսի-Ստեփանեանից 5 ռուբլի: (Այլ և մի գառ, որը ուղարկեցինք տիկին Գովհաննէսեանին՝ ձրի ճաշարանին դիմող հայ գաղթականների համար):

6) Թիֆլիսից, Միքայէլ Մէքուրնութեանից 3 ռուբլի:

7) Բագուից, Հ. Մ. Մուշկամբարեանից, 12 ռուբլի:

8) Գեառգեառ գիւղից, Պետրոս Բալաեանի միջոցով, 8 ռ. 30 կոպէկ: Նուիրատուներն են հետևեալ գիւղացիները.

Զ. Դէմիրճանեան 40 կ., Ս. Յովսէփեան 25 կ., Ե. Դէմիրճանեան 15 կ., Ս. Բալայեան 1 ռ., Մ. Դէմիրճանեան 40 կ., Պ. Զալեան 25 կ., Թ. Բալայեանց 10 կ., Պ. Ալէքսանեան 10 կ., սմն 10 կ., Ն. Տէր-Սարգսեան 5 կ., սմն 15 կ., Մ. Մուրադեան 10 կ., սմն 5 կ., Ա. Զալեան 5 կ., Խ. Նաղարեան 40 կ., Ե. Մատթէոսեան 15 կ., Ա. Բալաչեան 20 կ., Զ. Տէր-Մովսիսեան 20 կ., Ա. Աւետեան 20 կ., Ս. Զալեան 20 կ., Մ. Մնացականեան 10 կ., Վ. Բալաչեան 5 կ., Խ. Տէր-Մովսիսեան 5 կ., Ա. Բալայեան 30 կ., Ա. Մատթէոսեան 15 կ., Վ. Մուրադեան 25 կ.,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պոլիս, մայիսի 3-ին

Արդէն ըսինք՝ թէ դեսպաններուն ըրած դիմումներուն վրա՝ սուլթանը խոստացեր էր քաղաքական բոլոր յանցաւորներուն amnistie շնորհել. բայց որպէս զի մեր պատրիարքարանի մեծ շնորհ մը ըրած լինի, ուզեց որ պատրիարքն ինքը խնդրէ այդ amnistie-ն, սակայն այնպիսի ձեով մը որ՝ սուլթանը իրաւունք ունենայ խոստացած ներողութիւնը իր հաճոյից համեմատ գործադրել և դեսպաններն իրաւունք չունենան անկից զատ ուրիշ պահանջումներ ընելու, ուստի հարկ էր որ Օրմանեան խնդրագիր մատուցանէր՝ որ պալատը խմբագրուեցաւ: Այդ խնդրագրով պատրիարքը կը յայտարարէր բացորոշ կերպով՝ թէ Ազգին մէջ ներքին թշնամիներ կան՝ որոց ինքը պատասխանատու չէր կրնար լինել և սակայն միւս կողմանէ կերաշխաւորէր թէ Ազգին մէջ այլ ևս նմանօրինակ անկարգութիւններ չը պիտի պատահին: Սուլթանը շատ գոհ մնաց պատրիարքին սոյն յայտարարութիւններէն՝ և մէջիդիէի առաջին կարգի պատուանշանը շնորհեց.—Օրմանեան չէր կարող չը գիտնալ թէ իր ըրածը կատարեալ անխոհեմութիւն էր և թէ նոյն խնդրագրով ամեն յանցանք Ազգին վրա կը թողուր և անուղղակի կերպով կը մատնէր իբրև տէրութեան թշնամի ամեն անոնք՝ որ Ազգին իրաւունքները պաշտպանելու և եղած անիրաւութիւններու և խժդժութիւններու դէմ ձայն բարձրացնելով արդարութիւն պահանջելու ստիպուած էին խղճի օրէնքով. բայց սուլթանին բացարձակ կամքն այնպէս կը պահանջէր, ապա թէ ոչ Օրմանեան՝ պէտք էր հրաժարէր. սակայն կարելի էր միթէ...

Սուլթանն յաղթանակը տարած էր. ինչ որ չի կրցաւ ընել տալ Խմիրլեան սրբազանի՝ յաջողեցաւ կատարել Օրմանեանի ձեռքով. այլ ևս դեսպաններու բուռն միջամտութեան հարկ չէր մնացեր. ինչ իրաւունք ունէին նոքա հայոց համար բէֆորմներ պահանջելու և եղած կոտորածներուն վրա բողոքներ բառնալու. պատրիարքին խնդրագիրը սուլթանին սեղանին վրա դրուած էր. նա, յանուն Ազգին, իր ժողովրդովն յայտարարած է թէ՝ հայ ազգը՝ բաց ի սուլթանէ, ուրիշ ոչ ոքէ բան կը սպասէ, թէ՝ հայ Ազգն երախտապարտ է՝ սկիզբէն մինչև ցայսօր՝ օսմանեան վեհապետներէն վայելած անթիւ, անհամար շնորհքներու մասին, թէ՝ հայ Ազգը մեծապէս մեղանչեց, ներքին մի քանի խռովարարներէ թելադրուելով օսմանեան գահուն դէմ հակառակելով՝ և թէ կերաշխաւորէ, որ յետ այսորիկ այն կարգի խռովութիւններ տեղի չը պիտի ունենան երբէք: Արդ՝ երբ կերաշխաւորէ պատրիարք մը՝ ըսել է թէ Ազգն է յանցաւորը, և եթէ յանցաւոր է Ազգն՝ ուրեմն պատրիարքարանը կամ ժամանակի պատրիարքն էր մեղաւորը, որ չերաշխաւորելովը՝ լուն թելադրիչն եղած էր խռովարարներու, հետևաբար ներքին թշնամիներն եղած են՝ պատրիարքն և նորա հետևողները:

Այս ըսածներուս ճշմարտութիւնն արդարև անմիջապէս յերևան ելաւ, վասն զի՝ ասկից քանի մը ամիսներ յառաջ, երբ սուլթանն ստանալով Օրմանեանի յիշեալ մեղսալից խնդրագիրն՝ amnistie հրատարակեց՝ գործը բառին նշանակութեան հակառակ տեղի ունեցաւ,—amnistie, արքայական ընդհանուր ներողութիւն՝ անյիշաչարութիւն կը նշանակէ՝ ուստի եթէ սուլթանն ընդհանուր ներողութիւն հրատարակած էր՝ պէտք էր բոլոր բանտարկեալներն, աքսորեալներն և այլն մի և նոյն ժամանակ ազատուէին՝ և սուլթանական իրադէն ընդհանուր արձակուէր. բայց հակառակն եղաւ. սուլթանը՝ ներողութիւն շնորհեց միմիայն այն հազարաւոր թշուառներուն, որոնք անցեալ տարվայ օգոստոսի մէջ Պոլսոյ կոտորածէն անմիջապէս յետոյ առանց քննութեան և դատավճիռ ընդունելու բանտարկված և չարչարանքներու մատնուած էին. այս բանով սուլթանը, վարպետ ընթացքով, կերպով մը գոհացում տուած եղաւ դեսպաններու պահանջումներուն, իսկ Օրմանեանի խնդրագիրն իբրև document պահելով՝ վրիժառու աննողութեամբ մոռացման ենթարկեց զանոնք՝ զոր ինքը կը նկատէր իբրև գլխաւոր խռովարար և Օրմանեան պատրիարք կը հաստատէր:

Արդ, ինչու՞ մեղադրել դեսպաններուն: Խար-

Ս. Ղեոնդեան 25 կ., Ռ. Բալայեան 5 կ., Լ. Բալայեան 20 կ., Ց. Մատթէոսեան 10 կ., Շ. Բալաչեան 10 կ., Ա. Մովսիսեան 10 կ., Ց. Զալարեան 20 կ., Ց. Բալաչեան 60 կ., Ա. Տէր-Սարգսեան 25 կ., Պ. Նազարեան 5 կ., Շ. Նազարեան 20 կ., ոմն 17 կ., Մ. Ճշմարտեան 10 կ., Մ. Բալաչեան 10 կ., Գ. Մատթէոսեան 5 կ., Բ. Տէր-Մովսիսեան 5 կ., Ս. Մաղոյեան 15 կ., քահանայ Գրիգոր Տէր-Յովհաննիսեան 2 ր. 20 կ., Ց. Մուրադեան 30 կ., Ա. Դէմիրխանեան 10 կ., Ց. Դէմիրխանեան 20 կ., Ա. Բալաչեան 20 կ., Ա. Բեղլեան 8 կ., Տ. Զալեան 20 կ., Մ. Արզոյեան 10 կ., Մ. Դէմիրխանեան 20 կ., Կ. Մուրադեան 20 կ., Ե. Նահապետեան 20 կ.։ Ընդամենը 12 ր.։ Դրանից գիւղացիների համաձայնութեամբ յատկացրված է մի չքաւոր ուսուցչի 3 ր. 70 կ.։ Մնացած 8 ր. 30 կ. ուղարկվում է յօգուտ գաղթականների։

9) Թիֆլիսից, տ. Կատարինէ Բարախանեանի միջոցով, 11 ր. 50 կօպէկ։ Նուիրատուներն են՝ Անոնա Հախվէրդեանց 5 ր., Ա. Թիւնիբէգեանց 5 ր., Ս. Տէր-Յովհաննիսեանց 1 ր. 50 կօպէկ։

10) Բագուից, պատուոր Վ. Տումիմի միջոցով՝ աւեարանական հայերի մէջ հանգանակած 210 ռուբլի։ Նուիրատուներն են՝

Նուիրատուներն են՝ S. A. Tharajew 40 r., Frau W. Tharajew 10 r., Q. Martirossow 25 r., G. Harutinnow 12 r., G. Tharajew 10 r., G. Geworkov 5 r., M. Thorossow 3 r., A. Tharajev 3 r., S. Chatschaturov 3 r., H. Poghossov 2 r., G. Sarkissov 1 r., G. Aftandilov 1 r., M. Nersessov 1 r., M. Toptschiev 1 r., H. Ieghiasarov 2 r., H. Akunov 5 r., P. Stepanjanz 1 r., J. Tharajanz 2 r., E. Pirbudagov 10 r., H. Tharajev 5 r., P. Sergejov 20 r., N. Tharajev 1 r., H. Nersessov 1 r., H. Tardshimanov 5 r., M. Ohanov 2 r., M. Mossessov 1 r., A. Hakobjanz 1 r., I. Ajwasov 1 r., A. Tharajov 3 r., A. Arutschov 25 r., A. Tardshimanov 1 r., W. Geworkjanz 20 k., H. Toptschev 45 k., H. Danielljanz 20 k., S. Mirsajanz 2 r., I. Mirsajanz 1 r.

Այսօր ուղարկեցինք Թիֆլիսի ստիկանապետին, պ. կառավարչապետին հասցնելու համար՝ 523 ր. 80 կ.։

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 6917 ր. 72 կ. 105 ֆր. 5 լիրա 10 մարկ։

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Մայիսի 18-ին

«Գաղթականը ծոյլ է, նա չէ ուզում բան շինել», յաճախ գանգատվում են բագուցիները թշուառ հայ փախստականներից։ Գաղթականը ծոյլ է. դուք, կուլտ պարոններ, չարաչար սխալվում էք։ Դուք չէք օգնում նրան և զգում էք ձեր վարմունքի վատութիւնը. բայց փոխանակ այդ սխալը ուղղելու, գաղթականի վիճակը հոգալու, դուք գործում էք մի աւելի վատ յանցանք, կամենում էք արդարացնել ձեր զզուելի վարմունքը։ Գաղթականը ծոյլ չէ. նա Հայաստանի տանջվող անխոնջ և տոկուն մշակն է։ Նա աշխատում էր ոչ միայն իր ընտանիքի համար. նա կուլտ հաց էր տալիս քուրդին, վճարում էր կառավարութեան ծանր հարկերը։ Հացը պատրաստ չէ բնում դաշտում. հացը ձեռք բերելու համար հարկաւոր է դառն աշխատանք, հարկաւոր է մշակել, վարել հողը։

Նրա կինը և աղջիկը անպատված են քուրդից, երեխային մորթել է թիւրքը, արդար վատակը խլել են ձեռքից։ Հայրենիքից անջատված, բաժանված ընտանեկան օջախից, զրկված երեխաներից նա գաղթել է ուրիշ անյայտ երկիր։ Եւ դուք հանդիպելով այդ մարդուն՝ միայն մի բան գտաք ասելու, որ նա աշխատի, բան շինի, երբ դեռ բիւրաւոր ցաւերից մրմնջում է նրա սիրտը, երբ դեռ թարմ են նրա վէրքերը։ Ոչ, փարատեցէք նրա վիշտը, ամոքեցէք նրա ցաւերը, և այն ժամանակ միայն դրան գործ առաջարկեցէք։ Նա դեռ հիւանդ է. եթէ դուք, կուլտ պարոններ, այդ չէք հասկանում, նշանակում է, որ ձեր սիրտը մի փտած և նեխած մսի կտոր է։

Ն. Ա.։

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Մայիսի 18-ին

Մայիսի 16-ին, Թիֆլիսի դատաստանական պալատի Երևանի ժամանակաւոր բաժնում քննվեց մի գործ, որի էութիւնը հետեւեալն էր։ 1896 թւի սեպտեմբերի 8-ին, Նոր-Բայազէտի «Գեղարքունի» հիւրանոցում մի խումբ երիտասարդներ քէֆ էին անում, ի միջի այլոց, և երգեր երգում։ Այդ ժամանակ լուսամուտների մօտով անցնում են վրացի քահանան և տիրացուն իրանց կանանց հետ միասին։ Թէ ինչպէս է լինում, այդ մինչև այժմ էլ չէ պարզված, միայն այսքանը յայտնի է, որ երգողներից մէկը երգի մէջ մի ակնարկութիւն է անում տիրացուի կնոջ հասցէին։ Այս հանգամանքը սաստիկ վիրաւորում է տիրացուին, որը չատ լաւ հասկանում էր հայերէն. նա նայում է լուսամուտից, ճանաչում է մէկ երկուսին և նրանց խիստ պատժելու համար՝ քահանային պատմում է մի չարք հայհոյանքներ, իբրև թէ երգի մէջ երգված դէպի ռուսները և նրանց կրօնը։ Այդտեղից քահանան և տիրացուն դիմում են քննիչին, կազմվում է մի արձանագրութիւն և դրա հիման վրա անմիջապէս բանտարկվում են 6 հոգի, որոնց թւում և 2 ուսուցիչներ, որոնք մինչև նահանգական դատարանի վճիռը, մօտ 6 ամիս, Երևանի բանտումն էին։ Այդ գործը բաւական զբաղեցրեց դատաստանական չրջաններին, քննութիւններ կատարվեցին և այս թւի փետրվարի 17-ին Երեանի նահանգական դատարանում նշանակվեց գործի քննութիւնը, որի ժամանակ մեղադրվողները և նրանց տասնեակ վկաները միաբերան հաստատում էին երկու բան. նախ՝ որ ռուսների դէմ հայհոյանք չէ եղել, այլ մի ակնարկ դէպի տիրացուն, ինչպէս խոստովանվեց մեղադրվողներից մէկը. և երկրորդ՝ ուսուցիչներից մէկը այդ ժամանակ բոլորովին այնտեղ չէ եղել, ինչպէս հաւատացնում էին նոյն իսկ միւս 5 մեղադրվողները։ Իսկ միւս կողմը հաստատում էր, որ ուսուցիչը այնտեղ է եղել և հայհոյանքն էլ տեղի է ունեցել։ Այսպէս ուշադրութեան արժանի է հետեւեալ կէտը. կանչվածների մէջ հայհոյանքը լսել էին երկուսը՝— քահանան և տիրացուն. քահանան հաստատում էր՝ հիմնված տիրացուի խօսքերի վրա, որովհետև ինքը հայերէն չը գիտէ և նրան թարգմանել է տիրացուն, իսկ տիրացուն բացակայ էր, մի խօսքով ամենագլխաւոր մեղադրողը չը կար։ Չը նայած այս բոլորին, վճիռը տեղի ունեցաւ, և դատարանը մեղաւոր ճանաչելով վեցին, նոյն պատիժը որոշեց, այն է՝ ութ ամիս բանտարկութիւն։ Պրոկուրորը, անբաւական մնալով վճռից, յատկապէս երկու ուսուցիչների վերաբերմամբ, բողոքեց դատաստանական պալատին, նոյն կերպ վարվեցին և մեղադրվածները։ Պալատը այդ գործը քննեց մայիսի 16-ին, ինչպէս ասեցինք, և կայացրեց հետեւեալ վճիռը.—մեղադրվողներից չորսի պատիժը թողնել անփոփոխ, իսկ երկու ուսուցիչների պատիժը մեծացնել, այն է մի տարի բանտարկութիւն և մի քանի իրաւունքներից զրկել։ Պրոկուրորի մեղադրական ճառը նշանաւոր է այն կողմից, որ նա երկու ուսուցիչների պատիժը նախատեսել էր աքսորով մինչև 8 տարի, և գործին տրված էր աղգային բնաւորութիւն։

Յ. Տ.-Մ.

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Մայիսի 16-ին

Պարսկաստան ապաստանած հայ գաղթականներից բաժին էր ընկել նաև մեր սահմանակից Մաքուի խանութեան։ Այդ խանութեան պետ, նորերս վախճանված, Թէյմուր-խանը՝ ճանաչելով հայերին իբրև աշխատասէր և կուլտուրայի ընդունակ մի տարր, հեռատեսութեամբ հիւրասիրում է իր երկրում, տալով գիւղատեղեր, վարելահողեր, երկրագործական այլ և այլ գործիքներ և եղներ՝ աշխատելու և արժողութիւնը կամաց կամաց իրան յետ վճարելու պայմանով։ Այժմ այդ խանութեան մէջ տիրող խառն դրութիւնը, խանական մի քանի թեկնածուների մրցումը մի կողմից, և միւս կողմից էլ՝ Թաւրիզում վերջերս պատահած ընդհարումներից սարսափած, նոր պատուհասներից ազատվելու համար թիւրքահայ գաղթականները թողնում են իրանց ձեռքերով մշակած արտերն ու դաշտերը և վճռում են Շահթախտով անցնել մեր երկիրը։ Սովատանջ դրութեան մէջ 5 օր անցկացնելով Արաքսի պարսկական ափում, նրանք մի կերպ անցնում են մեր սահմանը ամենախչուառ դրութեան մէջ։ Այդ առիթով՝ կաթողիկոսական հեռագիր-հրամանով՝ մեր յաջորդը անմիջապէս գնաց Շահթախտ, յորդորելու նրանց կրկին դառնալու իրանց տեղերը, կրկին տիրանալու իրանց կանաչ արտերին... Բայց դժբաղդաբար յաջորդը վրա չէ հասնում և գաղթականները, թւով 100—120 հոգի, անցնում են դէպի Երևան։

Մեր առողջութեան հետ խաղացող մսագործները, ինչպէս երևում է, շատ անգամ են կերակրել մեզ սատկած կենդանիների «ջամթաքով»։ Անցեալները վաճառելիս՝ բժիշկը բռնել է չորս սատկոտած ոչխարներ, որից յետոյ՝ տէրերը ենթարկվել են 400 ռուբլի տուգանքի։ Այժմ վետերինար պ. Թորոսեան ամեն օր քննում է մորթվող կենդանիներին, դրոշմում է նրանց և ապա միւս օրը այդ մի և նոյն կենդանիները, իր կամ ֆելդշերի ներկայութեամբ, մորթվում են և մաշկված մսերը նորից դրոշմվելով ուղարկվում քաղաք վաճառելու։

Մեր քաղաքի բաղանիքները վաղուց յայտնի են իրանց հակառողջական պայմաններով։ Այդ բանը չէր կարող վրիպել սանիտարների աչքերից, ուստի հարց է դնվում կամ կողպելու կամ խաղողակներով անցկացնել ջուրը (կրաններ). բայց որովհետև երկու դէպքումն էլ բաղանիքատէրերին նիւթական վնաս կը հասնի, ուստի, օգտվելով ամբոխի տգիտութիւնից, այդ բանը «չարիաթի» դէմ են համարում։ Սակայն յարգելի «Ղազին» դրականապէս մերժում է «չարիաթի» վրին փաթաթել այդպիսի մի մեղադրանք։ «Շարիաթը, ասել է Ղազին, հրամայում է լուացումն. աւազանից կը վերցնեն այդ ջուրը, թէ կրանից, երկու կուժ ջուր կը բանեցնեն, թէ երկու բաժակ, դա մի և նոյն է. եթէ բժշկական խորհուրդը առողջական տեսակէտից վնասակար է համարում բաղանիքները, ներկայ դրութեան մէջ «չարիաթը» նրա կողմն է»։ Ղազիի այս առողջ մաքերը գրգռում են թուրքերի, մանաւանդ թուրք կանանց մոլեռանդութիւնը, որոնք սպառնում են քանդել Ղազիի գլխին իր տունը, և ինչպէս մեզ պատմում են, այդ փրճանքից ազատվելու համար, Ղազին ստիպված է եղել ոստիկանութեան միջամտութիւնը խնդրելու...

Ս. Դ.

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Մայիսի 12-ին

Թոյլ տուէք «Մշակի» միջոցով ձայն բարձրացնել և դուցէ այդ ձայնը օգնութեան հասնի Բաթումի քամբաղդ հայ հասարակութեանը, հասցնելով նրա ամենաարդար բողոքը հոգեւոր իշխանութեան ուշադրութեան։ Չունենք քահանայ, չունենք եկեղեցի, բախտ բուն նըշանակութեամբ։ Ամենքիս սիրտը վաղուց խոցոտած քահանայական հարցը մեր հոգեւոր իշխանութիւնը իբր թէ լուծեց՝ յայտնի քաջագործ տէր-Աբգարին հեռացնելով և հուչակաւոր տէր-կոտէին խաչ չնորհելով։ Հոգեւոր իշխանութիւնը այդպիսով ուզեց անբոյժ վէրքի վրա իր սպեղանին դնել, առանց արմատից հիմնովին բժշկելու և ընդհակառակն, վրան իւղ թափելու պէս աւելի բորբոքեց երկու կողմի ժողովրդի սրտերը։

Բայց եթէ ժողովրդի մի դասը կարողանում է իր հոգեկան պէտքերը լրացնել եկեղեցուց դուրս, որովհետև նրան պէտք չեն միայն մեռելթաղողներ, սակայն ստիպված է վչտաւոր կերպով ականատես լինել նոյն եկեղեցում իր հարազատ եղբայրների դժբաղդութեան, որոնք իսլամի հալածանքից փախած՝ թափառում են Բաթումի փողոցները, հաց մուրալուց անդամ ամաչելով։ Ցուսահատութեան ծայրին հասած այդ գաղթականը մի պուճաղ չէ գտնում ապագայ եկեղեցու խարխուլ սենեակներում, ուր կարողանայ լալ և արցունք թափել. չը կայ նրան մխիթարող մի օրինաւոր քահանայ։

Ոչ-հարուսաը դեռ շարունակում է կատարել իր պարտքը դէպի այդ թշուառները, իսկ հարուսը, հայ քահանան, - քաւ լիցի։ Գիտենք և յայտնի է ամենքին մեծ դրամատէր պ. Մանթաչեանց, որից՝ համեմատելով մեր միւս հարուստների հետ՝ դեռ չնորհակալ պիտի լինենք։ Սակայն, ընթերցող, եթէ մի բոպէ կանգ առնէք նրա մեծ գործարանի առաջ և ականատես լինէք կէս օրվայ արձակուրդին նրա բազմաթիւ բանուորների կացութեանը, նրանց կեր ու խուճիզութիւնը. Իզմիրլեան սրբազան՝ իր ներբամութեամբն իմացած էր Ազարեան հայ-հուսկական պատրիարքին վարմունքն ընդդէմ հայոց, ուստի կատարեալ անկեղծութեամբ մերժեց ընդունել Ազարեանի այցելութիւնն և, ցորքան Իզմիրլեան պատրիարք էր հայոց, Ազարեան չը համարձակեցաւ ոտք կոխել հայոց պատրիարքարանը. բայց այժմ Ազարեան գրեթէ առաջին խորհրդական եղած է Օրմանեանի, այսպէս պէտք է եղեր վարուել... Այո, նորէն կը կրկնեմք և միշտ պիտի կրկնեմք թէ Օրմանեան անկեղծ չէ, նա երբէք չը հրաժարիր և ազգին արդար իրաւունքներն ու պահանջները ոտնակոխ ընելէ զատ՝ ուրիշ ոչ և է արդիւնք չը պիտի կրնայ յառաջ բերել, մինչև որ արդարութեան Աստուածը հայոց ազգի թշուառութեան չափը լցուած և յորդած տեսնելով՝ իրաց ներկայ վիճակն յեղաշրջէ և թշուառ թրքահպատակ հայերուս համար երջանկութեան դռները բանայ ի մօտոյ. այն ատեն կը տապալի Օրմանեան։

Դերուկ

դաւանք մը՝ որ ուղղակի պատրիարքէն կը բղխի ճշմարտութեան երևոյթով՝ և երբ պատրիարքարանն ու ժողովները կը յայտարարեն՝ թէ ազգը ոչինչ չը պիտի ընէր՝ եթէ ներքին և արտաքին թշնամիներ ունեցած չը լինէր, դեսպաններն ինչ իրաւունք կունենային այլ ևս պահանջելու՝ թէ amnistie-էն պէտք է որ ամենքն ազատուին։

Այս պատճառաւ է, որ Իզմիրլեան և Շիշմանեան սրբազաններն և հայր Խարախանեան տակաւին կը հեծեն Պաղեստինի Անյուշ բերդին մէջ,—թող ներուի ինձ Անյուշ բերդ անուանել Երուսաղէմի ս. Յակոբայ Առաքելին վանքը, վանն զի աքսորեալ մը այնտեղ միշտ մոռացման ենթարկուած է, ով կը հարցնէ թէ այդ մարդիկ ինչ կընեն այնտեղ, ինչպէս կապրին, ոչ ապաքէն վանք մէ, ոչ ապաքէն առաւօտ երեկոյ կերակուր մը կը դանեն ուտելու և այլն։ Իզմիրլեանն էր միայն որ այդ Անյուշ բերդէն կարդեց հանեց Ապահունի և Ներսէս Վեհապետեան եպիսկոպոսներն, Իզմիրլեանն էր՝ որ առանց չողոքորթելու, առանց չողոմելու բանտերու խոնաւութենէն և դահիճներու կատանքներէ աղատեց հարիւրաւոր եկեղեցականներ ու աշխարհականներ և նոցա տեղ իր անձը տուաւ աքսորուելով Երուսաղէմ և վատառողջութեամբ ապրելով վանքի խոնաւ սենեակներու մէկ անկիւնն և ով գիտէ մինչև Ե՞րբ...։

Օրմանեան՝ սոյն հաճոյակատար ընթացքով վճռացուց բոլորովին ազգին ապագան. նա այլ ևս չէ կարող ուրիշ տեսակ քայլ առնել՝ մօտուքը կատարելապէս սուլթանին ձեռքն է յանձնած. սուտ են բոլորովին այն հրատարակութիւնները՝ թէ դեսպաններու նօթեր (note) ուղղեր է բողոքելով վերջին կոտորածներուն վրա, թէ թաքուր մատուցեր է Բ. Դրան՝ առաջարկելով՝ թէ երբ խոստացուած բարենորոգումները չը գործադրուին՝ պիտի ստիպուի հրաժարիլ (ինչ մեծ դժբախտութիւն)։ Օրմանեան ոչ դեսպաններուն կրնայ դիմել և ոչ ալ Բ. Դռնէն բարենորոգում պահանջելու համարձակել. արդէն առաջին անգամ իր անբաւ չնորհակալութիւնները դրած էր յոտս գահոյից օսմանեան պետութեան. այժմ ինչ իրաւունքով դիմելու պիտի ելնէր, և ինչպէս պիտի դիմէր դեսպաններուն՝ քանի որ ինքը բացարձակապէս յայտարարեր էր սուլթանին՝ թէ ինք օսմանեան գահուն փարած՝ ոչ ոքէ բան չը սպասէր. բայց թէ Օրմանեան՝ Բարթուղիմէոսի պէս ակնյայտնի եղանակաւ ցոյց չը տար ինքզինքն, նա իր ձեռքին տակ ունի իր մէկ քանի տղայ վարդապետներն՝ որ Արմաչէն Պոլիս բերել տալով ցրուեց զանոնք ժողովրդեան խաւերուն մէջ. նոքա ժողովրդեան մէջ միշտ Օրմանեան կը փառաբանեն և կը ջանան ժողովրդեան հաճելի երեցած գործեր Օրմանեան պատրիարքի կողմանէ իբրև գործադրուած իրողութիւններ հաստատելով՝ գայթակղած մտքերը կաղդուրել զանազան սուտերով և սուտ հրատարակութիւններով. բայց ով կը հաւատայ. ապուշ լինելու է մարդ որ հանդէպ ճշմարտութեան այն կարգի սուտերուն հաւատք ընծայէ ու սեին ճերմակ ըսէ կամ խաւարին լոյս։—Մի անգամ ընդ միշտ պէտք է գիտնալ թէ՝ Օրմանեան պատրիարք անկեղծ մէկը չէ, նա իր սրտին ամենածածուկ խորերուն մէջ կը պահէ պապական

մին և մի փոքր հեռաքրքրվէք նրանց ներքին վիճակով,—ակամայ հարց կը տաք. արդեօք պարտաւոր չէ՞ այդ մեծ դրամատէրը հոգալու և այս խեղճ, ֆիզիքապէս մաշված և հոգեպէս անմխիթար երիտասարդ աշխատողներին պատշաճաւոր յարմարութիւններ տալու մասին։ Պ. Մանթաշեանի գործարանին կից կայ և ուրիշ ոչ պակաս մեծ գործարան, որը պատկանում է նոյնպէս հայ հարուստներին, — եղբ. Ծովեանեանցներին։

Ահա այդ երկու ֆիրմային է դիմում Բաթումի հայ հասարակութիւնը. թող Բաթումում վաստակած փողերի հարիւրերորդ տոկոսներից մի փոքր բաժին հանեն մեր եկեղեցու կառուցման համար և մենք հաստատ համոզված ենք, որ միւս երկրորդական գործարանատէրերը և միջին կարգի ունեւոր դասը իսկոյն և եթ կը միանան այդ գործին և եկեղեցին՝ իրանց կիցսենեակներով, մի տարվայ ընթացքում կանգուն կը տեսնենք, ի մխիթարութիւն բոլորիս. և ամօթ նրանց, որոնք արգելքներ ստեղծեցին սկզբում միմիայն քահանայական զզուելի հարցի առիթով։

Ասում ենք զզուելի քահանայական հարց, որովհետև, յիրաւի, նա զզուեցրեց մեր ամբողջ հասարակութիւնը։ Տէր-Կոստէն, որը իբր այստեղի քահանայ է, չէ ընակվում այստեղ. նա երկու մեծ տօներին անօրհնէք է գալիս և ուժով փող կորզում քանի մի միամիտներից. իսկ վերջերս էլ, ասում են, որ իր օգնական տէր-Սեդրակ քահանայի հետ էլ ծեծկըտվելով խլել է նրանից անօրհնէքի ժամանակ ժողոված փողերը՝ և փախել Թիֆլիս։ Տէր-Սեդրակ քահանայի գոյութիւնը երևան է գալիս ննջեցեալ թաղելիս կամ սոյնանման պարզ պաշտօնակատարութեան ժամանակ. թողնենք որ նա գրել չը գիտէ և աւետարանը կարդալիս տիրացուն է վրա գցում, այլ և տնից դուրս չէ գալիս մինչև հաղար անգամ ոտքերն ընկած չէ աղերսում սովատանջ գաղթականը և իր վերջին կօպէկը չէ չնորհում նրան։ Ո՞վ է ուղարկել այս քահանային, ինչ թղթով և որի խնդիրքով,—մեզ յայտնի չէ։ Երբ պէտք է վերջ լինի այս բոլորին։

Բաթումցի

ՆԱՄԱԿ ՍԻՄՖԵՐՈՊՕԼԻՑ

Մայիսի 5-ին

Ապրիլի 27-ին Թումանեանի դահլիճում կայացաւ պարահանդէս յօգուտ թիւրքահայ սովեալների։ Կազմակերպողները թոյլատրութիւն ստանալու համար ստիպվել էին մինիստրութեան դիմել և երկու ամիս սպասել։ Ուրախալի երևոյթ էր, որ երկու համայնքի՝ այն է հայ-լուսաւորչականների և հայ-կաթոլիկների ներկայացուցիչները, թէ օրիորդ և թէ երիտասարդ, մեծ եռանդով մասնակցում էին առանց «գրդռվելու» (միմեանց միս ուտելու), ինչպէս ասում են զրիմցիք։ Սակայն, չը նայելով այդ բանին, չը նայելով երեկոյթի բարի նպատակին և վերջապէս չը նայելով թոյլատրութիւն ձեռք բերելու դժուարութեան, հասարակութիւնը աւելի սառն վերաբերվեց, քան թէ վերաբերվել է ուրիշ անգամներ։ Մի քանի տեղ տոմսակ բերողներին չէին ընդունել։ Մի քանի տեղ էլ այս տեսակ խօսքեր են ասել թէ՝ «Էղաւ կօգտէ սրտիս բեղտեցանք»։

Մի մոռանաք, յարգելի տիկիններ և պարոններ, որ ձեզ առաջարկեցին յօգուտ ձեր սովեալ եղբայրների և քոյրերի պարել և զուարճանալ, իսկ դուք այնպիսի ազմուկ բարձրացրիք, որ կարծէք թէ ձեզ առաջարկեցին նրանց հետ միասին կրել սովը և միւս բոլոր նեղութիւնները։ Դուք որ մի քանի երեկոյթներում ձեր սովեալ եղբայրների և քոյրերի համար պարելուց և մի քանի ռուբլի տալուց ձանձրացաք, հապա 50 հազար թշուառ գաղթական ժողովուրդը ինչ անէ ամենօրեայ քաղցածութեան և նեղութիւնների մէջ։ Ոչ, յարգելի տիկիններ և պարոններ, դուք ձեզ քրիստոնեայ անուանելուց առաջ, պէտք է սովորէք օգնել ձեր եղբայրներին և չը պէտք է ձանձրանաք դրանից, ինչպէս որ չէք ձանձրանում ձեր ամենօրեայ ճաշից, հանդստութիւնից, թանգագին մետաքսեայ զգեստներից։ Միմիայն եկեղեցի գնալով դուք դեռ քրիստոնեայ չէք կարող անուանվել։ Երեկոյթի ընդհանուր մուտք եղաւ 350 ր., ծախս 90 ր. զուտ արդիւնք՝ 260 ր.։ Միաք կայ այնտը մի վիճակախաղ սարքել։

Ց. Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, մայիսի 16-ին

«10—15 տարի առաջ Էջմիածնում մայր տաճարի երգեցողութիւնը այնքան գրաւիչ էր ու քաղցր, որ կիրակի օրերը շրջակայ գիւղերից և Երևանից բաւականին բազմութիւն էր գալիս պատարագին ներկայ լինելու, իսկ տեղացիները հօ, աւելորդ է ասել, լցնում էին վանքը։ Իսկ այժմ... այժմ բառի բուն նշանակութեամբ երգեցողութիւնը բացակայում է»։ Այսպիսի տխուր ոճով է սկսել իր նամակը «Մշակի» մէջ, Էջմիածնի X թղթակիցը, մայր վանքի եկեղեցական երգեցողութեան այժմեան ընկած վիճակի մասին և ապա ընթացել նոյն ուղղութեամբ։ Թղթակցին պատիւ է բերում, որ գիտէ իրերի համեմատութիւն անել։ Բայց զարմանում եմ մի բանի վրա, թէ որտեղ էին նրա ականջները և աչքերը, երբ մայր տաճարի մէջ իրօք մաւ կանոնաւոր, ներդաշնակ, քառաձայն երգեցողութիւն, երբ իսկապէս փոքր ի շատէ երգեցողութիւն հասկացող մարդիկ թէ Վաղարշապատից և թէ Երևանից՝ գալիս էին տաճարը պատարագի ժամանակ և լսում ժամասացութիւնը սկզբից մինչև վերջ, երբ նոյն իսկ օտարները, տեղական ծառայողները, լսում էին հետաքրքրութեամբ նոյն պատարագը նոյնպէս ծայրէ ի ծայր։ Որտեղ էր. գուցէ նրանց թուումն էր և նրանց հետ էր, որոնք միայն ոտնձգութեամբ էին պարապում բազմաչարչար հայ գործիչի դէմ, որը իբր երգեցիկ խումբ կազմակերպող և աւանդող՝ կարող է պատիւ բերել և ոչ միայն հայերին։ Կարող է՞ ընթերցողը մի բօպէ կասկածել, որ մեր խօսքը չը գնահատված Կարա-Մուրզայի մասին է, որին ահագին ջանքով աջողեցրինք հրաւիրել ճեմարան, և որը սկիզբը դրեց մի կանոնաւոր գործի. բայց վերջինս նոյնքան երկարատև եղաւ, որքան իւրաքանչիւր հիմնական բարեփոխութիւն մեզանում։

Զարմանալի բան. հայերը «մայմունութեան» մէջ նմանը չունեն, սկսած նիստ ու կացից։ Բայց փորձեցէք մի վերանորոգութիւն մի որ և իցէ հասարակական գործում, կը տեսնէք, որ Անիի աւերակներում ամենամութ գիշերը այնքան բուեր չեն ճչում, որքան չարագուշակ ձայներ կը սկսեն լսվել բոլոր խաւերից անխտիր։ Սակայն այդ թողնենք. այդ շատ հեռու կը տանի մեզ։ Դառնանք դէպի թղթակիցը։ Թոյլատրելի է՞ հարցնել պ. թղթակցին. 10—15 տարի առաջ ովքեր էին վանքի և ճեմարանի օրինակելի ղեկավարները, որոնց օրով, ի միջի այլոց, և երգեցողութիւնը այնքան քաղցր էր. չէ՞ որ նոյն անունները էին՝ Կոստանեան, Մանդինեան և ընկ., որոնք ինչպէս ճեմարանի չար ճակատագիր, ըստ երևոյթին, մինչև վերջը անբաժան պիտի մնան նրանից։ Եւ այդ ինչ քաղցր երգեցողութիւն էր, երբ ամբողջ խումբը երգում է առանց ձայների բաժանման, միաձայն, միակերպ։ Գուցէ թղթակից պ. X պատկանում է նոյն կարգի մարդկանց, որոնց պատկանում էր հանգուցեալ Կիւրեղ եպիսկոպոսը, որը հակառակ էր քառաձայն երգեցողութեան և պնդում էր, որ «Աստուած մի է և երգեցողութիւնն էլ միաձայն պիտի լինի»։

Ց. Սաղաթելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մինչև մայիսի 1-ը, ամբողջ Ռուսաստանից կովկասեան կառավարչապետի դիւանատունը՝ յօգուտ թիւրքահայ գաղթականների հաւաքված գումարը 38,000 ռուբլի է։

Այսօր, շաբաթ, մայիսի 24-ին, առաւօտեան ժամի 10-ին Թիֆլիսի շերամապահական կայարանում բացվում է ընտանի թռչունների ցուցահանդէս, որը պէտք է շարունակվի հինգ օր։ Մուտքը արժէ 10 կօպէկ։ Ցանկութիւն են յայտնել ցուցահանդէսին մասնակցելու իրանց թռչուններով մինչև 25 անձ։ Ցուցահանդէսում կը լինեն՝ տեղական հաւեր, բրամապուտրա, կօխինխին, բանտամ, զանազան տեսակների խառնուրդներ, բաղեր, հաւի տակ թուխս դրած ֆասիաններ և այլն։

—

Ռուսաց սինոդի թոյլատրութեամբ, կազանում պէտք է բացվի զանազան աղանդների դէմ գործող միսիոնարների երրորդ ժողովը։ Ժողովի նըպատակն է աղանդների առաջն առնելու դէմ նոր միջոցներ գտնել։ Ժողովը կը սկսվի յուլիսի 22-ին և կը վերջանայ օգոստոսի 6-ին։

—

Այս օրերս Պետերբուրգից ճանապարհ պէտք է ընկնի դէպի Խիվա մի յատուկ պատգամաւոր, փոխ-գնդապետ Գեմնետ, որի պաշտօնն է, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները՝ ներկայացնել Խիվայի խանին զանազան ընծաներ, ի միջի այլոց, ադամանդեայ գրիչ, ոսկեայ սերվիզ և այլ թանգագին իրեր։

—

«Մշակի» անցեալ համարի ներքին լուրերի բաժնում մի սխալ է մտել.—տպագրված էր՝ մայիսի 20-ին տիկին Մայերովայի բէնեֆիսն էր, բայց պէտք է լինի տիկին Մարտինովա։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Անցեալ կիրակի Նոր-Նախիջևանի ուսուցիչներից և վաճառականներից կազմված մի փոքր խումբ գնացել էր Ս. Խաչ վանքը, մեր անմահ բանաստեղծ և հրապարակախօս Միքայէլ Նալբանդեանի գերեզմանի վրա հոգեհանգիստ կատարելու։ Հոգեհանգստից յետոյ տրվեց նախաճաշ։ Նոր վանահայր՝ Մուշէ վարդապետ Դանագեօզեան, որը պատարագիչ էր, ոչ մի խօսք չասեց Նալբանդեանի մասին եկեղեցու մէջ, իսկ նախաճաշի ժամանակ ասաց «որ առհասարակ Նալբանդեանի մասին սովորութիւն չէ եղել երկար խօսել. միայն ես այսքանը կասեմ, որ Նոր-Նախիջևանը կարող է պարծենալ, որ տուել է Նալբանդեանի նման մարդ. յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։ Դրանից յետոյ խօսեց թեմական դպրոցի ուսուցիչ Ե. Շահազիզը, որ վարդապետի խօսքերի հակառակ, ասաց. «Ես չեմ կարող կարճ խօսել, մանաւանդ որ շատ եմ պարապել Նալբանդեանի կեանքի ուսումնասիրութեամբ։» Ապա նա գեղեցիկ և ոգեորված ճառով ցոյց տուեց Նալբանդեանի գործունէութեան էութիւնը։ Նրա ճառի էութիւնը այն էր, որ Նալբանդեանը եղել է ժողովրդի մարդ, և մինչև Նալբանդեան չը կար մէկը, որ ժողովրդի անունից խօսէր, այլ ամենքը խօսում էին հոգևորական և հարուստ դասակարգի անունից։ Նալբանդեան առաջինն էր, որ ժողովրդի անունից խօսեց և նրա իրաւունքները պաշտպանեց։»

—

ԴԱԶԱԽԻ գաւառից հաղորդում են. «Թէ ցանքսերը և թէ մարգագետինները բաւարար վիճակի մէջ են և յոյս կայ, որ հունձը լաւ լինի։ Աղստաֆայի մօտերքը ցանքսերը փոքր ինչ նօսր են բուսել, բայց հասկերը ուժեղ են»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լօրդ Սոլսբիւրի ուղարկել է Ուեստմինստրի դուքսին այն հեռագրի պատճէնը, որ նա ստացել է Կ. Պոլսի անգլիական դեսպան Ֆիլիպ Կերրիից։ Հեռագիրը վերաբերում է այն 500 ֆունտ ստերլինգ գումարին, որ կորել է Իսուֆ Իզզանի սպանութեան ժամանակ։ Ահա Կերրիի հեռագրի բովանդակութիւնը։

«Կ. Պոլիս, 13 մայիսի։ Իմ տէր, ապրիլի 30-ից ուղարկած ձեր հեռագրին՝ պատիւ ունեմ հաղորդել, որ Իսուֆ Իզզանի սպանողի մահվան պատիժը ներկայացրած է վճռաջինջ ատեանի հաստատութեան։ Ինչ վերաբերում է կորած գումարին, ցաւելով պէտք է յայտնեմ, որ չը նայելով Ֆիթիլիսի անգլիական փոխ-հիւպատոսի գործ դրած ջանքերին, գտնվել է միայն 20 ֆունտ։ Ես դիմել եմ Բ. Դրան և յայտնել այդ կորուստի մասին, իբրև առանձին պահանջ, տարբեր ըսպանութեան գործից։»

ԿՐԵՏԷԻ ԳՈՐԾԵՐը

Լօնդոնից հետևեալ մանրամասնութիւններն են հաղորդում Կրետէում ծագած դժուարութիւնների մասին. «Ցունաց զօրքերը պէտք է հեռանային Կրետէից, բայց ծովակալները չէին թոյլ տալիս պահանջելով, որ գնալուց առաջ յունական զօրքերը յետ առնեն Ակրոտիրիի ապստամբներից նրանց տրված 6 արագաձիգ թնդանօթները։ Տեղեկանալով այդ բանի մասին, մինիստր-նախագահ Բալլի հեռագրեց գնդապետ Ստանկոսին, Կրետէի յունական զօրքերի հրամանատարին, հետևեալը. «Եթէ ձեզ չի աջողվի համոզել ապստամբներին և նրանք չեն կամենայ յետ տալ թնդանօթները, այն ժամանակ թոյլատրութիւն խնդրեցէք առանց թնդանօթների հեռանալ և բողոքեցէք, եթէ ձեր առաջ արգելքներ դնեն, պատասխանատուութիւնը գցելով ծովակալների վրա»։

Մինիստր-նախագահ Բալլի «Daily Telegraph» լրագրի թղթակցին ասեց. «Երբ մենք պատրաստակամութիւն էինք յայտնում կարգը վերականգնել Կրետէում և բոլոր միջոցներն ունէինք մեր ձեռքում, մեր առաջարկութիւնները մերժեց Եւրոպան, որը պահանջում էր, որ մենք դուրս բերենք մեր զօրքերը։ Իսկ այժմ, երբ մենք մեր զօրքերը յետ ենք կանչում, Եւրոպան չէ թոյլ տալիս այդ։ Արդեօք ծովակալները չեն կամենում, որ մենք մի տեսակ զինուորական արշաւանք սկսենք կրետացի մեր եղբայրների դէմ։ Մենք երբէք այդպիսի բան չենք անի։ Ակրոտիրեան թնդանօթների համար մենք ատելի չենք դարձնի մեր անունը մեր եղբայրների աչքում։ Նոյնպիսի իրաւունքով նրանք կարող են մեզանից պահանջել, որ մենք զինաթափ անենք կրետացիներին։ Սակայն մինչև որ թիւրքերը չը հեռանան կղզուց, չէ կարելի զինաթափ անել ապստամբներին, որովհետև երեւակայել անգամ անկարելի է թէ ինչ կը պատահի, եթէ անօգնական և անզէն քրիստոնեաները դէմ առ դէմ կանգնած կը լինեն կատաղած մահմեդականների առաջ»։

ՑՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԹԻՒՐՔԻԱ

Բանակցութիւններ. Սուլթանը՝ մի իրադէով էֆէմ և Ասիմ փաշաներին նշանակեց թիւրքայ լիազօրներ՝ Ցունաստանի հետ խաղաղութեան դաշն կապելու համար։ Պայմանները պէտք է կնքվեն Ֆարսալում։

Տարաձայնութիւններ. «Times» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ վեց մեծ պետութիւնների մէջ անհամաձայնութիւններ են ծագել Թէսալիայի մասին։ Ոմանք ցանկանում են այդ նահանգը թիւրքիայի ձեռքում պահել, մինչև պատերազմական տուգանքի վճարելը, ոմանք՝ ոչ։ Սուլթանն ամեն միջոց գործ է դնում, ինչպէս միշտ, այս հարցում էլ կուեցնել պետութիւններին միմեանց հետ։

Պարտաստութիւններ. Ցունաստանը, ի նկատի ունենալով թիւրքիայի մեծ պահանջները, էլի պարտաստութիւններ է տեսնում պատերազմի համար։ Թնդանօթ և զօրք է ուղարկում դէպի Թերմօպիլ։ Թիւրքայ կառավարութիւնն էլ նոր զօրքեր է ճանապարհ դրել դէպի Ցունաստան։

Ռուսաստանի միջամտութիւնը. Վիէննայի լրագիրները հաւատացնում են, որ Ռուսաստանը ուզում է իր վրա առնել պատերազմական տուգանքի հատուցումը թիւրքիային, Ցունաստանի փոխարէն, ի հաշիւ այն գումարի, որ թիւրքիան պարտ է Ռուսաստանին։ Այդ պարտքը, ինչպէս յայտնի է, ռուս-թիւրքական պատերազմի կօնտրիբուցիան է։ Սան-Ստեֆանոյի դաշնագրով թիւրքիան պէտք է վճարէ Ռուսաստանին 1,400 միլիօն։ Ռուսաստանը ստացաւ Փոքր-Ասիայում 1,100 միլիօնի հողեր, մընաց 300 միլիօն պարտք։ Մի քիչ յետոյ այդ գումարը իջեցրին մինչև 200 միլիօնի։ Դրանից թիւրքիան 1884 թուից մինչև 1895 վճարել է միմիայն մօտ 21 միլիօն, մնում է վճարելու դեռ 179 միլիօն։ Այդ մի այնպիսի մեծ գումար է, որ Ռուսաստանը համարձակ կարող է իր վրա առնել Ցունաստանի պարտքը, (որ հաւանօրէն 5 միլիօն կը նշանակվի), մանաւանդ որ թիւրքիան էլ կը չարունակի մնալ Ռուսաստանի պարտականը։

Թիւրքերի յանդգնութիւնը։ Չը նայած զինադադարին, 300 թիւրքեր այս օրերս երևացին չէղոք սահմանագծի վրա։ Ցունաց ժանդարմները նրանց յետ քշեցին։ Թագաժառանգ Կոնստանդինը սաստիկ վրդովված է թիւրքերի այդ նոր յանդգնութեան վրա, որ զինադադարի բացարձակ խախտումն է։

Թիւրքերի պատասխանը. Լարիսայից «Times» լրագրին հեռագրում են, որ Վոլօի իտալական հիւպատոսը դիմեց Լարիսայի նահանգապետին մի հարցապնդումով, թէ թիւրքայ քաղաքացիական և զինուորական իշխանութիւնները երբ պէտք է հեռանան Վոլօից: Նահանգապետը պատասխանեց, թէ Վոլօն նուաճված քաղաք է և այդ քաղաքում գտնվող հիւպատոսը, որը նշանակված է եղել յունաց կառավարութեան ժամանակ, արդէն դադարել է պաշտօնական անձն լինել թիւրքայ իշխանութեան աչքում, այլ համարվում է միայն անուանի օտարերկրացի, որին թիւրքայ իշխանութիւնները պարտաւոր են հովանաւորութիւն ցոյց տալ, բայց ամենևին պարտաւոր չեն որ և է տեղեկութիւն տալ: Նահանգապետն աւելացրեց, որ եթէ որ և է անկարգութիւններ տեղի ունենան Վոլօում, պատասխանատուն իտալական հիւպատոսը կը լինի»:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզի վերջին հրդեհի ժամանակ այրված Ալանսոնեան դքսուհու ամուսինը, Ալանսօնի դուքսը, մտադիր է թողնել աշխարհային կեանքը և վանք քաշվելով՝ վարդապետ դառնալ: Նա յայտնել է, որ իր ամուսնու ողբերգական մահից յետոյ անկարող է շարունակել իր այժմեան կենցաղը:

* *
*

Սուլթանն ընծայեց Վիլհելմ կայսրին յոյներից գրաված վեց թնդանօթ: Թնդանօթները արդէն ուղարկված են Բերլին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մայիսի: Պետերբուրգի դումայի ձայնաւորների ժողովը միաձայն ընտրեց բօրսային կոմիտեի նախագահ Աւէքսէյ Նակովլեվիչ Պրոզորովին երեք տարով:

Ներքին գործերի մինիստրը որոշեց. Ինկատի ունենալով «Хозяинъ» չաբաթաթերթի ճնշաակար ուղղութիւնը, որ արտայայտվեց «Տվերի զէմստվոն» և «Գիւղատնտեսական գործունէութեան տեսութիւն» յօդուածների մէջ, որոնք տպված էին այդ չաբաթաթերթի №№ 19 և 20-ում, յայտնել «Хозяинъ» չաբաթաթերթին երրորդ նախազգուշութիւն, յանձին հրատարակչի՝ առհմային պատասխանատու քաղաքացի Մաչկովցէվի և խմբագրի—աղնուական Մերտվագօի, դադարեցնելով «Хозяинъ» հրատարակութիւնը երկու չաբաթով:

ՀՌՕՄ, 21 մայիսի: Վատիկանի դիւանատան դիրեկտոր Մարտինուչիի վրա առաւօտեան, դիւանատան ճանապարհի վրա, ս. Պետրոս եկեղեցու մօտ յարձակում գործեց իր ձիապանը, որին արձակել էր պաշտօնից: Ձիապանը ապա ատրճանակն արձակեց իր ականջում, և ծանր վիրաւորեց իրան:

Կ. ՊՕԼԻՍ, 21 մայիսի: Դեսպանների երկրորդ հաղորդագրութեանը պատասխանելով, Բ. Դուռը պնդում է այն բանի վրա, որպէս զի զինադադար լինի 15 օրով, և այդ ժամանակամիջոցը կարելի կը լինի երկարացնել, եթէ 15 օրից յետոյ խաղաղութեան բանակցութիւնները աւարտված չեն լինի:

Կ. ՊՕԼԻՍ, 21 մայիսի: Արտաքին գործերի մինիստրը բերանացի հաղորդեց դիպլոմատիական մարմնի աւագագոյնին, որ Բ. Դուռը սկզբունքով համաձայն է զինադադարին, որ պէտք է շարունակվի խաղաղութեան բանակցութիւնների ամբողջ տևողութեան ժամանակ: Զինադադարը կը ստորագրվի թիւրքայ գլխաւոր բանակում: Նշանակված են թիւրքայ լիազօրներ դեսպանների հետ խաղաղութեան մասին բանակցութիւններ վարելու: Բանակցութիւնները կը սկսվեն այս օրերս:

Կ. ՊՕԼԻՍ, 21 մայիսի: Նաւատորմի անգործութեան դէմ ընդհանուր դժգոհութիւնը չէ դադարում: Անգլիական նաւակառույց գործարանները դիմեցին սուլթանին և առաջարկեցին յանձն առնել ծովային արսէնալի կառավարչութիւնը հինգ տարի ժամանակով 5 միլիոն ֆունտ ստերլինգ վճարով: Նրանք պարտաւորվում են վերակազմել և վերանորոգել բոլոր պատերազմական նաւերը և, բացի դրանից, կառուցանել վեց նոր պատերազմական նաւեր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մայիսի: Թագաւոր Կայսրը Բարձրագոյն հրամայեց արդարադատութեան մինիստրին անձամբ բանալ Իրկուտսկի դատաստանական պալատը և նահանգական դատարանը, թոյլ տալով մինիստր Մուրավիէվին, որ նա Սիբիրի դատաստանական ուրիշ նոր հիմնարկութիւնների բանալը յանձնի տեղական դատաստանական վարչութեան բարձր պաշտօնեային: Դատաստանական հիմնարկութիւնները կը բացվեն Սիբիրում 1897 թվի յուլիսի 2-ին:

ՎԻԵՆՆԱ, 22 մայիսի: Բարձրագոյն հրամանով, կառավարութիւնը փակված յայտարարեց Բէյխարատի նստաշրջանը: Նախագահը երեք անգամ «hoch» կանչեց ի պատիւ կայսրի, և ժողովը հիացմունքով կրկնեց: Պատգամաւորները սաստիկ յուզված դուրս եկան նիստի դահլիճից:

ՊԱՐԻԶ, 22 մայիսի: Լրագիրներում լուրեր են տպված, որոնցից երևում է, որ այս ամառը նախագահ Ֆորի Ռուսաստան գնալը շատ հաւանական է երևում:

ԼՕՆԴՕՆ, 22 մայիսի: «Daily News» լրագրին Կանէյից հեռագրում են, որ մայիսի 19-ին, գիշերը, ապստամբները յարձակում գործեցին Գիերապէարիի վրա, բայց յարձակումը յետ մղվեց Ֆրանսիական և իտալական նաւերի կրակով:

Կայիրէից ստացված տեղեկութիւնների համեմատ, Մէկկայի ուխտաւորների մէջ, որոնք կարանտինի էին ենթարկված, տեղի ունեցաւ հիւանդութեան մի կասկածելի դէպք, այն է խօլերայի դէպք:

ՎԻԵՆՆԱ, 22 մայիսի: Սերբիայում և Բոլգարիայում, հեղեղների պատճառով, գետերը դուրս եկան ափերից, կամուրջները ջուրը տարաւ, հաղորդակցութիւնները ընդհատվեցին: Վնասը շատ մեծ է: Սերբիայում հեղեղված են մի քանի քաղաքներ:

Կ. ՊՕԼԻՍ, 22 մայիսի: Մայիսի 22-ին Բ. Դրան մէջ տեղի կունենայ առաջին խորհրդակցութիւնը թիւրքիայի և Յունաստանի մէջ խաղաղութեան դաշն կապելու մասին: Խորհրդակցութեանը կը մասնակցեն դեսպանները և թիւրքայ արտաքին գործերի մինիստրը:

ԿԱՆԷՅՍ, 23 մայիսի: Ապստամբները իրանց խաղաղ են պահում և դիտաւորութիւն ունեն մի յանձնաժողով նշանակել, որը կանոնաւոր յարաբերութիւններ կունենայ ծովապետների հետ:

ՊԱՐԻԶ, 23 մայիսի: Այն տեղեկութիւնը, թէ թիւրքիան ընդունեց զինադադարը խաղաղութեան բանակցութիւնները վարելու ամբողջ տևողութեան ժամանակ՝ գեղեցիկ տպաւորութիւն գործեց կառավարչական շրջանների վրա: Հաւատացնում են, որ թիւրքիան խաղաղասէր տրամադրութիւն է ցոյց տալիս՝ չնորհիւ ռուսաց դիպլոմատիայի գործունէութեան յօգուտ Յունաստանի:

Լօնդօնից լրագիրներում տպված հեռագիրը հաստատում է, թէ Ռուսաստանը պահանջում է, որ թիւրքայ զօրքերը չուտով հեռանան Թեսալիայից:

ՀՌՕՄ, 23 մայիսի: Սիամի թագաւորը հասաւ այստեղ:

Կ. ՊՕԼԻՍ, 23 մայիսի: Մայիսի 22-ին թօփխանէում բանակցութիւններ սկսվեցին խաղաղութեան դաշն կապելու մասին: Նիստին ներկայ չէին քարտուղարներ և արձանագրողներ, և բանակցութիւնները խիստ գաղտնապահութեամբ են կատարվում:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ԵՐԵՒԱՆ. Բարեգործական ընկերութեան վարչութեան նախկին անդամներին: Ձեր նոր հերքումը չի տպագրվի, այն պատճառով, որ շատ մեծ է: Դուք, իբրև հիմնարկութեան անդամներ (և ոչ իբրև մասնաւոր անձինք) իրաւունք ունէիք ասելու վերջին խօսքը, բայց ձեր պատասխանի մեծութիւնը մեզ իրաւունք է տալիս չը տպագրել նրան: Թէ դուք և թէ պ. Տ. Յովհաննիսեան ձեր բանակռիւի համար բաւական օգտվեցիք «Մշակի» էջերից, այնպէս որ աւելի ըղբաղեցնել այդ էջերը նոյն բանակռիւով՝ մենք թոյլ տալ անկարող ենք:

ԿԱՂԶՈՒԱՆ. Բժ. Գ. Կաճկաճեանց. Ձեր հերքումը՝ «Մշակի» № 17-ի մէջ տպած Մ. Ղազարեանի նամակի դէմ, անկարող ենք տպագրել, միմիայն այն պատճառով, որ չափից դուրս մեծ է: Ձեր առաջին պատասխանը արդէն շատ և պատրաստ էր տպագրութեան, երբ հեռագրով խնդրեցիք՝ չը տպագրել: Այժմ, այս երկրորդ, անհամեմատ մեծ պատասխանը, խնդրում էք տպագրել անփոփոխ: Մենք պարտ ենք համարում միջոց տալ ձեզ պատասխանելու՝ բայց այդքան մեծ պատասխանը տպագրել՝ անհնար է:

ԿԱՂԶՈՒԱՆ. Մ. Ղազ. Ձեր հերքումը չի տպագրվի: Մենք փակում ենք այդ բանակռիւը:

ԵՐԵՒԱՆ. Ա—Դօ. Ձեր երկրորդ պատասխան-նամակը չի տպագրվի: Ձեր պատիւը, իբրև թղթակցի, հաւատացէք, բողոքվին չէ չօշափված, և այդ պատճառով մենք մեզ իրաւունք ենք համարում այդ բանակռիւն էլ փակել:

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏ. 10 անձանց. Ձեր նամակը տեղական յաջորդի մասին, անկարող եղանք տպագրել, մեզանից անկախ պատճառներով:

ԻԳԴԻՐ. Ա. Ա. Ձեր «Հայի» վերնագրով պատկերը լոյս տեսնել չէ կարող:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիսի) և ներքին հիւանդութիւնների:

Դ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ $1^1/_2$—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հնգշաբթի:

Ի. Ֆ ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի և ուրբաթ:

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—$6^1/_2$—$7^1/_2$ ժ.

Հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հեռադիտութիւններ են անում մէզի, խիպարեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՄԱՍՍԱԺ

Բժիշկների ղեկավարութեան տակ, պարապում եմ զանազան հիւանդութիւնների բժշկելով ՄԱՍՍԱԺՈՎ, և առողջական ԳԻՄՆԱՍՏԻԿԱՑՈՎ: Հիւանդների ընդունելութիւնը՝ $5^1/_2$—$6^1/_2$ ժամը երեկոյեան: Աւշլեան փողոց, № 19:

75—146 ԳԷՈՐԳ ԽՈՍՐՈԵՎԱՆՑ

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

Բ. ԳԻՐՔ

(520 երես. 26 պատկեր)

ԳԻՆՆ Է 2 ր.

Բացված է երրորդ գրքի բաժանորդագրութիւնը: Բաժանորդագինն է 2 ր.:

Դիմել՝ Ерванду Лалаянцу, ШУША. կամ ԹԻՖԼԻՍ՝ կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցները:

(№ 58) 2—4

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑ ԱՒԱՐՏԱԾ

ՄԻ ՊԱՐՈՆ

ցանկանում է հայերէն դասեր ունենալ. համաձայն է ամարանոց գնալ: Հարցնել՝ էժանագին գրադարան, Վելիամինսկայա փողոց:

(№ 59) 2—4

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում

ԱԶԳ ԴԱՐԻՒԻ ՀԷՔԻԱԹԸ

Աշխ. Այդ Զիւանիի

ԳԻՆԸ 40 կոպէկ:

(№ 58) 3—3

Սանդուղներ, պատշգամբներ, դարպասներ, ցանկապատներ եւ այլն

ՇԻՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

յանձն է առնում, չափաւոր գներով,

ԵԱՐԱԼՕՎ ԵՒ ԱԼԻԽԱՆՕՎ

Ինժեներների գործարանը: Թիֆլիս, Աշէքսանդրեան փողոց, կայարանի մօտ, սեփական տուն: Տէլէֆօն № 9. (№ 59) 2—5

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզօն, Սամսօն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 28 մայիսի (յունիսի 2) ՍԻՐԿԱՍԱԻ չոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻՍ և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից

Պակաս գներով: Ալրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Ալբօրն, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդակեանին, Սիոնի փող. նախկին Արծրունու քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կօլիբեանինական հրապարակ: ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիսեդեկ Հերչինրօգերին: (№ 16) 2—20

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ

ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մահ մկներին, խլուրդներին և ուրիշ կրծողներին Այս միջոցը արտաքսում է այդ կենդանիներին գլխաւորապէս բնակարաններից, այնպէս որ նրանք չեն մնում դեռնայարկի տակ և չեն տարածում գարշահոտութիւն:

ՄԼԱԿՆԵՐԻ ԴԷՄ ՀԵՂՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիշտ: Նա շատ հաճելի հոտ ունի և բիծ չէ թողնում ճերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա: Փոչիացնելով նրան, սենեակի օդին հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանճը և մոծակները:

ՓՈՇԻ՝ ՄԻԶԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենայարմար միջոցն է բոլոր միջատները և նրանց սաղմերը բոլովին ոչնչացնելու համար: Այդ փոչին անփոխարինելի է լուներ և մկակներ ոչնչացնելու համար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային սպատերում: Ոչնչացնելով ցեցը և չունենալով նաֆթալինի անհաճոյ հոտը, այս փոչին բոլորովին փոխարինում է նրան. դրա համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մորթեղէն իրերը պահելու համար: Փոչու ազդեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջատների, մրջիւնների դէմ—գրեթէ վայրկենական է—հետևանքը զարմանալի: Հարցնել դեղավաճառական խանութներում:

(№ 23) 36—50

Дозволено цензурою, Тифлисъ, 23 мая, 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.